ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 47

«23» 05 2020 թ. գ. Երևան

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրան նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու 38.1-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների

ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի հարցաշարը՝ համաձայն հավելվածի N 2-ի (կցվում է):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2020 թվականի մայիսի 23-ի
թիվ «47» հրամանի

ԿԱՐԳ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների (այսուհետ՝ առանձին՝ Մրցույթ, միասին՝ Մրցույթներ) կազմակերպման ու անցկացման աշխատանքները:

2. Մրցույթներն անցկացվում են «Դատախազության մասին» օրենքին (այսուհետ՝ Օրենք), սույն կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Մրցույթներն անցկացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին (այսուհետ՝ Գլխավոր դատախազ) առընթեր որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

II. ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Մրցույթների վերաբերյալ հայտարարությունը հրապարակում է Հանձնաժողովը՝ մրցույթներն անցկացնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ Հայաստանի Հանրապետության դատախազության (այսուհետ՝ դատախազություն) կայքում և առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում:

5. Յուրաքանչյուր մրցույթի վերաբերյալ հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

1) Մրցույթը հայտարարող մարմնի անվանումը.

2) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակներում

ընդգրկվելու համար անհրաժեշտ կրթական, մասնագիտական, աշխատանքային փորձառությանը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները.

3) անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ընդունման ժամկետը, վայրը.

4) Մրցույթի անցկացման ժամանակահատվածը և վայրը.

5) Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնողի գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

6) անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

6. Հարցաշարը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի մասին հայտարարության հետ տեղադրվում է ՀՀ դատախազության www.prosecutor.am պաշտոնական կայքում (այսուհետ՝ Պաշտոնական կայք):

III. ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

7. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Հայաստանի Հանրապետության դատախազության անձնակազմի կառավարման վարչություն (այսուհետ՝ Նախապատրաստական աշխատանքներ իրականացնող) ներկայացնում են Օրենքով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև Օրենքի 38.1-ին հոդվածի 2-րդ մասով նշված՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ (այսուհետ՝ Հայտ):

8. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը կարող է ներկայացնել երաշխավորագրեր, որոնք, իր կարծիքով, կարող են նշանակություն ունենալ ընտրության գործընթացում:

9. Քաղաքացին Հայտը ներկայացնում է անձամբ:

10. Նախապատրաստական աշխատանքներ իրականացնողը մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած յուրաքանչյուր անձի վերաբերյալ Հայտը ներկայացնում է Հանձնաժողովի անդամներին, իսկ հայերեն լեզվին չտիրապետող փորձագետի դեպքում՝ նրա օգնականին, ով նախապատրաստական աշխատանքների շրջանակներում օժանդակում է փորձագետին վերջինիս լիազորությունների իրականացմանը:

11. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված Հայտը թերի լինելու դեպքում այդ մասին դիմումատուին տեղեկացվում է նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկօրյա ժամկետում: Թերությունները կարող են վերացվել Հայտի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

12. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործընթացը, ինչպես նաև Մրցույթների նախապատրաստական այլ աշխատանքները կարող են իրականացվել Հանձնաժողովի անդամների միջև հեռավար քննարկումների միջոցով՝ Հանձնաժողովի նախագահի համակարգմամբ: Հայտը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ Օրենքով նախատեսված պահանջները չբավարարող Հայտի ընդունումը մերժվում է, և այն ենթակա են վերադարձման Հանձնաժողովի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Հայտն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ քվեարկությամբ: Աշխատանքները հեռավար իրականացնելու դեպքում

Նախապատրաստական աշխատանքներ իրականացնողը Հայտն ուղարկում է Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով Նախապատրաստական աշխատանքներ իրականացնողի կարծիքը Հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ և կցելով քվեարկության հետևյալ ձևանմուշը՝

ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՈՐՈՇՈՒՄ		
Հանձնաժողովի անդամի անուն, ազգանուն	Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձի անունը, ազգանուն	Նշում հայտի ընդունումը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ

14. Հանձնաժողովի անդամի և Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձի տվյալները լրացնում է Նախապատրաստական աշխատանքներ իրականացնողը: Հանձնաժողովի անդամը «Նշում հայտի ընդունումը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ» դաշտում նշում է «Բավարարել» կամ «Մերժել» և անմիջապես նույն փոստի հասցեով հետ է ուղարկում Նախապատրաստական աշխատանքներ իրականացնողին: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամ փորձագետը չի տիրապետում հայերենին և ունի օգնական, ապա փորձագետի դիրքորոշումը նշվում է օգնականի կողմից:

15. Այն անձանց տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն), որոնց Հայտը բավարարվել է Հանձնաժողովի կողմից, Հայտ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են Պաշտոնական կայքում:

IV. ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ

16. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անց է կացվում առանձին մրցույթ:

17. Մրցույթը, կախված հավակնորդների թվաքանակից, կարող է անցկացվել մեկից ավելի օրերի ընթացքում: Այդ կապակցությամբ հավակնորդների հարցազրույցի օրերի, ժամերի և վայրի մասին ծանուցումն ապահովում է Նախապատրաստական աշխատանքներ իրականացնողը՝ Մրցույթից առնվազն 2 օր առաջ՝ հեռախոսով կամ կապի այլ միջոցով: Այն դեպքում, երբ հանձնաժողովի նիստն իրավազոր չլինելու հանգամանքով պայմանավորված չի կայանում, մրցույթի անցկացման օրվա մասին հավակնորդը տեղեկանում է Մրցույթի անցկացման օրվանից առնվազն 1 օր առաջ:

18. Մրցույթներն անցկացվում են հարցազրույցի եղանակով՝ հաշվի առնելով Օրենքով և սույն կարգով նախատեսված առանձնահատկությունները:

19. Հարցազրույցը հայտատուի մասնագիտական պատրաստվածության, գործնական հմտությունների, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածության, նրա անձնական որակների և արժանիքների (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն) հատկանիշների ստուգումն է, որը

կատարվում է այդ նպատակով կազմված հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով:

20. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթն անցկացվում է հարցազրույցի միջոցով հետևյալ երեք փուլերով՝

1) յուրաքանչյուր թեկնածուի փաստաթղթերի և մասնագիտական փորձառության ուսումնասիրություն: Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ, իսկ որակավորման հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ թեկնածուին՝ նրա մասնագիտական փորձառությունը, աշխատանքային ձեռքբերումները, գիտական հետաքրքրությունները, տվյալ պաշտոնում նրա մոտիվացիան, ակնկալիքները և այդ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները գնահատելու համար.

2) դատախազի վարքագծի կանոններին և ղեկավարման ու կառավարչական հմտություններին վերաբերող իրավիճակի ներկայացմամբ թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատախազի վարքագծի կանոնների և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար, անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտությունների տիրապետման, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում, վերլուծական կարողություններ և այլն).

3) համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումներ և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար: Թեկնածուին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ:

21. Մրցույթն անցկացվում է անգամ այն դեպքում, եթե Մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

22. Այն դեպքերում, երբ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազի կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուն իրավաբանական գիտությունների թեկնածու է կամ իրավաբանական գիտությունների դոկտոր և ունի գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժ, ապա հանձնաժողովը ստուգում է միայն հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը օրենքով նախատեսված պահանջներին, նրա անձնական որակները և արժանիքները՝ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում):

23. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուների ընտրության ժամանակ Հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

24. Հանձնաժողովի նախագահը, մինչև Մրցույթը սկսելը, լուծում է Հանձնաժողովի նիստի իրավազորության հարցը՝ ստուգելով Հանձնաժողովի անդամների ներկայությունը: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի առնվազն ութ անդամ: Եթե Հանձնաժողովի նիստն իրավազոր չէ, ապա Հանձնաժողովի նախագահը, քննարկելով Հանձնաժողովի ներկա անդամների հետ, հետաձգում է Մրցույթի օրը՝ որոշելով Մրցույթի անցկացման նոր օրը, որը չի կարող գերազանցել երկու աշխատանքային օրը:

25. Հարցազրույցն անցկացնում է հանձնաժողովը՝ յուրաքանչյուր հավակնորդի հետ առանձին: Հավակնորդին արգելվում է իր հետ հարցազրույցի անցկացման սենյակ բերել և ունենալ հեռախոս, իրավական կամ դատական ակտեր կամ այնպիսի տեխնիկական սարքեր, առարկաներ ու նյութեր, որոնց կարող են օգտագործվել հարցերին պատասխանելու համար:

26. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը ձայնագրվում և գրավոր արձանագրվում է: Արձանագրության տակ ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և Հանձնաժողովի քարտուղարը:

27. Հարցազրույցի ձայնագրությունը կցվում է արձանագրությանը:

28. Հարցազրույցի ձայնագրությունն ու գրավոր արձանագրությունն ունեն միևնույն իրավական ուժը, սակայն հակասության դեպքում առաջնայնությունը տրվում է ձայնագրությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ ձայնագրությունը պատշաճ որակի չէ կամ տեխնիկական այլ խնդիրների պատճառով հնարավոր չէ այն վերարտադրել, որի պարագայում հիմք է ընդունվում գրավոր արձանագրությունը:

29. Հանձնաժողովի հարցադրումները պետք է ձևակերպվեն հստակ և հավակնորդի համար լինեն հասկանալի: Հարցադրումները պետք է լինեն հարցաշարի հարցերից, որի շրջանակներում թեկնածուին կարող են տրվել նաև հստակեցնող կամ տվյալ հարցի որևէ դրսևորման հետ կապված տեսական կամ պրակտիկ իրավիճակի վերաբերյալ հարցադրում:

30. Հարցազրույցի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդին կարող է տալ առավելագույնը երկու հարց, սակայն ընդհանուր հարցերի քանակը պետք է լինի առնվազն վեցը:

31. Հարցերից առնվազն երկուսը պետք է վերաբերի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված կարգավորումներին:

32. Հարցին պատասխանելու համար հավակնորդին ցանկության դեպքում տրվում է ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու համար:

33. Յուրաքանչյուր հարցից հետո հարց տվող Հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ, մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելը, իսկ սխալ կամ մասնակի ճիշտ պատասխանի դեպքում նշում է ճիշտ պատասխանը:

34. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի փորձագետը չի տիրապետում հայերենին, ապա Մրցույթներին ապահովվում է համարժեք թարգմանություն, իսկ Մրցույթներին նրա փաստացի ներկա գտնվելու անհնարինության դեպքում նա մրցույթային գործընթացին

մասնակցում է տեսակապի միջոցով: Հայերենին չտիրապետող Հանձնաժողովի փորձագետը կարող է ունենալ օգնական, որն իրավունք ունի ծանոթանալ ներկայացված Հայտին և պարտավոր է պատշաճ կերպով ողջ տեղեկատվությունը ներկայացնել Հանձնաժողովի փորձագետին:

35. Արտակարգ դրության ժամանակ տեղաշարժի սահմանափակում սահմանված լինելու դեպքում Մրցույթները կամ Հանձնաժողովի նիստը կարող է անցկացվել հեռավար: Այս դեպքում Հանձնաժողովի գործառույթների իրականացումն և Մրցույթների անցկացումն ապահովվում է էլեկտրոնային ընթացակարգերի միջոցով: Մրցույթների անցկացման օրվա և ժամանակի մասին Հանձնաժողովի անդամները և հավակնորդները ծանուցվում են նիստից առնվազն մեկ օր առաջ:

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

36. Հանձնաժողովը տվյալ օրվա բոլոր թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելուց հետո քննարկում է յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը, որի ժամանակ Հանձնաժողովի անդամները կարող են արտահայտել իրենց կարծիքը:

37. Սույն կարգի 36-րդ կետում նշված քննարկումը դռնփակ է և չի ձայնագրվում:

38. Քննարկումն ավարտելուց հետո Հանձնաժողովի նախագահը քվեարկության է դնում յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ դրական եզրակացություն տալու հարցը:

39. Քվեարկությունը տեղի է ունենում բաց եղանակով: Եթե Հանձնաժողովի անդամը չի քվեարկում, ապա այն դիտարկվում է որպես դեմ քվեարկություն տվյալ թեկնածուի վերաբերյալ:

40. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազի թեկնածուն ստանում է դրական եզրակացություն, եթե դրական եզրակացություն տալու օգտին կողմ է քվեարկել Հանձնաժողովի նիստին մասնակցող Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Կողմ կամ դեմ ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված՝ դրական եզրակացությամբ:

41. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուն ստանում է դրական եզրակացություն, եթե դրական եզրակացություն տալու օգտին կողմ է քվեարկել Հանձնաժողովի առնվազն ութ անդամ:

42. Քվեարկության արդյունքներով յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ կազմվում է եզրակացություն՝ դրական կամ բացասական նշումով: Եզրակացությունը ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և Հանձնաժողովի քարտուղարը: Հատուկ կարծիք ունենալու դեպքում Հանձնաժողովի անդամը գրավոր ներկայացնում է այն, որի մասին նշում է կատարվում նիստի արձանագրությունում՝ «հատուկ կարծիքը կցվում է» բառերով:

43. Տվյալ օրվա մրցույթին մասնակցող բոլոր թեկնածուների վերաբերյալ քվեարկություն կազմակերպելուց հետո այդ օրվա թեկնածուները հրավիրվում են հարցազրույցի անցկացման սենյակ, որտեղ Հանձնաժողովի նախագահը բարձրաձայն ընթերցում է այդ օրվա բոլոր եզրակացությունները, այն է՝ հայտարարում է մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը՝ նշելով եզրակացության դրական կամ բացասական լինելը:

44. Մրցույթի ավարտից հետո մեկօրյա ժամկետում դրական եզրակացություն ստացած թեկնածուների վերաբերյալ ցուցակը ներկայացվում է գլխավոր դատախազին:

45. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների հավակնորդներից այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, Հանձնաժողովի նախագահի կողմից մրցույթն ավարտվելուց հետո մեկօրյա ժամկետում ներկայացվում են գլխավոր դատախազին, որն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում:

46. Գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար գլխավոր դատախազին ներկայացվում են Հանձնաժողովի կողմից առավելագույն ձայներով դրական եզրակացություն ստացած երեք հայտատուները՝ մրցույթն ավարտվելուց հետո առավելագույնը մեկօրյա ժամկետում: Գլխավոր դատախազը որոշում է հայտատուին կամ հայտատուներին՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու հարցը:

47. Այն դեպքում, երբ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար անցկացված մրցույթի արդյունքում պարզվում է, որ դրական եզրակացություն ստացած անձանց մեջ կա (կան) այնպիսի անձ (անձինք), որի հավաքած ձայները հավասար են առավելագույն երեք ձայներ ստացած հայտատուներից ամենից քիչ ձայն ստացած հայտատուի ձայներին, ապա գլխավոր դատախազին ներկայացվում է նաև այդ անձի (անձանց) թեկնածությունը: Այն դեպքում, երբ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու համար անցկացված մրցույթի արդյունքում դրական եզրակացություն են ստացել երեքից պակաս հայտատուներ, ապա գլխավոր դատախազին ներկայացվում է այդքան քանակի անձի կամ անձանց թեկնածությունը

48. Սույն կարգի 45-րդ և 46-րդ կետերում նշված թեկնածությունների ցուցակներում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով:

49. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթների արդյունքներով առնվազն վեց թեկնածու չի ստանում դրական եզրակացություն, կամ գլխավոր դատախազը ցուցակի մեջ ընդգրկում է վեցից պակաս թեկնածուների, կամ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում չի ընդգրկվում առնվազն մեկ թեկնածու, ապա անցկացվում է լրացուցիչ բաց մրցույթ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների համապատասխան ցուցակը համալրելու նպատակով:

50. Ըստ անհրաժեշտության, գլխավոր դատախազի հրամանով կարող է անցկացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման թափուր հաստիքների համալրման նպատակով մրցույթ:

51. Մրցույթի արդյունքները հրապարակվում են ՀՀ դատախազության Պաշտոնական կայքում յուրաքանչյուր մրցույթի ավարտից հետո մեկօրյա ժամկետում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

52. Եթե Հանձնաժողովի անդամը հանդես է գալիս Մրցույթների մասնակից, ապա Հանձնաժողովի նախագահը տվյալ մրցույթի անցկացման սկզբում հայտարարում է այդ մասին և այդ հավակնորդն այլևս չի կարող հանդես գալ որպես Հանձնաժողովի անդամ տվյալ մրցույթի ժամանակ:

53. Եթե Հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս որպես Մրցույթների մասնակից, ապա գլխավոր դատախազի հրամանով Հանձնաժողովի անդամներից մեկը կատարում է Հանձնաժողովի նախագահի լիազորությունները՝ այդ մրցույթի շրջանակներում:

54. Հիվանդության կամ առողջական խնդիրների պատճառով Մրցույթի նշանակված օրը մրցույթին մասնակցության անհնարինության դեպքում հավակնորդը կամ իր կողմից լիազորված անձը ներկայացնում է համապատասխան հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր մինչև Մրցույթի անցկացման օրը: Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ տվյալ հավակնորդը մասնակցում է Մրցույթին Մրցույթի համար նախատեսված օրերից մեկ այլ օր, առավելագույնը՝ վերջին օրը:

55. Հասարակական վերահսկողություն իրականացնելու նպատակով՝ հասարակական հիմունքներով մրցույթներին կարող են ներկա գտնվել նախապես հավատարմագրված դիտորդներ, որոնք պետք է ունենան կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առնվազն մեկ տարվա տեսական կամ պրակտիկ փորձառություն: Դիտորդները մրցույթների սկսվելու օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ դիմում են ՀՀ դատախազություն՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ՝ պատճենով և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առնվազն մեկ տարվա տեսական կամ պրակտիկ փորձառությունը հավաստող փաստաթուղթ: Դիտորդին դիտորդական առաքելություն իրականացնելը թույլատրելու վերաբերյալ Հանձնաժողովի նախագահը տալիս է իր համաձայնությունը՝ երկու օրվա ընթացքում, որի վերաբերյալ տեղեկացվում է տվյալ դիտորդը: Դիտորդների կողմից մրցույթային գործընթացի տեսանկարահանումը, լուսանկարահանումը կամ ձայնագրությունն արգելվում է: Դիտորդն առանց Հանձնաժողովի աշխատանքներին որևէ կերպ միջամտելու հետևում է նիստի ընթացքին: Դիտորդների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ արտակարգ դրության պայմաններում դիտորդների ներկայությունը մրցույթի անցկացման սենյակում կարող է արգելվել կամ նրանց քանակը կարող է նվազեցվել: Արտակարգ դրության պայմաններում դիտորդների ներկայությունը մրցույթի անցկացման սենյակում արգելվելու դեպքում, համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության պարագայում նրանք դիտորդական առավելություն են իրականացնում հեռավար եղանակով:

56. Մրցույթային գործընթացի ավարտից հետո մրցույթների արդյունքները հրապարակվում են դատախազության Պաշտոնական կայքում:

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2020 թվականի մայիսի 23-ի
թիվ «47» հրամանի

Ծանոթություն

Սույն հարցաշարում ընդգրկված հարցերի լիարժեք պատասխանները պետք է ներառեն դրանց օրենսդրական կարգավորումները, դրանց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով սահմանված կանոններն ու դիրքորոշումները:

ՀԱՐՑԱՇԱՐ
«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները.

2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները.

3) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերը,

4) Համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները.

5) ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը.

6) ՀՀ Ազգային ժողովը.

7) ՀՀ Կառավարությունը.

8) ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը.

9) ՀՀ դատական համակարգը.

10) ՀՀ Սահմանադրական դատարանը.

11)ՀՀ դատախազության և քննչական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը.

Եվրոպական կոնվենցիա և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունք

12) Եվրոպական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում.

13) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. գործերի քննությունը ողջամիտ ժամկետում.

14) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները սեփականության պաշտպանության վերաբերյալ.

«Դատախազության մասին» օրենք

15) Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության սկզբունքները.

16) Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգը.

17) ՀՀ գլխավոր դատախազը.

18) Քրեական հետապնդում հարուցելը.

19) Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

20) Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.

21) Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը.

22) Պետական շահերի պաշտպանությունը.

23) Դատախազական ակտերը.

24) Հայաստանի Հանրապետության դատախազությունում ծառայողական ենթակայությունը և դասային աստիճանները.

25) Դատախազի իրավունքներն ու պարտականությունները.

26) Դատախազի խրախուսումն ու կարգապահական պատասխանատվությունը.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

27) ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքները.

28) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.

29) Հանցագործության հասկացությունը և հատկանիշները.

30) Հանցագործության տեսակները. շարունակվող և տևող հանցագործությունները.

31) Հանցակազմի տարրերը.

32) Հանցագործության օբյեկտի ընդհանուր բնութագիրը.

33) Հանցագործության օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

34) Հանցագործության սուբյեկտի ընդհանուր բնութագիրը.

35) Հանցագործության սուբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

36) Քրեական պատասխանատվությունից ազատելը.

37) Համաներում և ներում.

38) Բռնագանձման քրեաիրավական բնութագիրը.

39) **Մարդու օրգանների (և) կամ հյուսվածքների ապօրինի շրջանառության** քրեաիրավական բնութագիրը.

40) **Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման** քրեաիրավական բնութագիրը.

41) **Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման** քրեաիրավական բնութագիրը.

42) **Ընտրողներին կաշառք տալու, կաշառք ստանալու, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտման կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելու** քրեաիրավական բնութագիրը.

43) **Ընտրակաշառքի միջնորդության** քրեաիրավական բնութագիրը.

44) **Խարդախության քրեաիրավական բնութագիրը,**

45) **Յուրացնելու կամ վատնելու** քրեաիրավական բնութագիրը

46) **Առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու** քրեաիրավական բնութագիրը.

47) **Շորթման** քրեաիրավական բնութագիրը.

48) **Ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու** քրեաիրավական բնութագիրը.

49) **Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման)** քրեաիրավական բնութագիրը.

50) Վարկը ոչ նպատակային օգտագործելու քրեաիրավական բնութագիրը.

51) Հակամրցակցային գործունեության քրեաիրավական բնութագիրը.

52) Առևտրային կաշառքի քրեաիրավական բնութագիրը.

53) Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու քրեաիրավական բնութագիրը.

54) Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

55) Կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգության քրեաիրավական բնութագիրը.

56) Ահաբեկչության քրեաիրավական բնութագիրը.

57) Ահաբեկչության ֆինանսավորման քրեաիրավական բնութագիրը.

58) Բանդիտիզմի քրեաիրավական բնութագիրը.

59) Հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելու քրեաիրավական բնութագիրը.

60) Օրենքով չնախատեսված զինված միավորումներ ստեղծելու կամ դրանց մասնակցելու քրեաիրավական բնութագիրը.

61) Ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության քրեաիրավական բնութագիրը.

62) Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու քրեաիրավական բնութագիրը.

63) Խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգության քրեաիրավական բնութագիրը.

64) Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու քրեաիրավական բնութագիրը.

65) Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու քրեաիրավական բնութագիրը.

66) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

67) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության քրեաիրավական բնութագիրը.

68) Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելու կամ պահելու քրեաիրավական բնութագիրը.

69) Պաշտոնական լիազորությունները չարաշահելու քրեաիրավական բնութագիրը.

70) Պաշտոնական լիազորություններն անցնելու քրեաիրավական բնութագիրը.

71) **Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու** քրեաիրավական բնութագիրը.

72) **Ապօրինի հարստանալու** քրեաիրավական բնութագիրը.

73) **Կաշառք ստանալու և կաշառք տալու քրեաիրավական բնութագրերը.**

74) **Կաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագիրը.**

75) **Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու** քրեաիրավական բնութագիրը.

76) **Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու** քրեաիրավական բնութագիրը.

77) **Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու** քրեաիրավական բնութագիրը.

78) **Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու** քրեաիրավական բնութագիրը.

79) **Պաշտոնեական կեղծիքի** քրեաիրավական բնութագիրը.

80) **Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու** քրեաիրավական բնութագիրը.

81) **Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու** քրեաիրավական բնութագիրը.

82) **Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու** քրեաիրավական բնութագիրը.

83) **Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու** քրեաիրավական բնութագիրը.

84) **Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության** քրեաիրավական բնութագիրը.

85) **«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության ընթացքում կեղծ հայտարարագիր ներկայացնելու քրեաիրավական բնութագիրը.**

86) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության տվյալները հրապարակելու քրեաիրավական բնութագրիրը.

<u>Քրեական դատավարության օրենսգիրք</u>

87) «Բնակարան» հասկացությունը.

88) Բնակարանի և գույքի անձեռնմխելիությունը.

89) Ապացույցների հասկացությունը, որպես ապացույց չթույլատրվող նյութերը.

90) Ապացույցների տեսակները քրեական դատավարությունում.

91) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.

92) Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում.

93) Դատավարական ժամկետները քրեական դատավարությունում.

94) Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը.

95) Քրեական գործի վարույթը կասեցնելը քրեական դատավարությունում.

96) Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.

97) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման նկատմամբ դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը.

98) Քրեական հետապնդման և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը.

99) Դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները.

100) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացին աջակցելու նպատակով ձեռնարկվող օպերատիվ-հետախուզական գործունեությունը.

<u>Քաղաքացիական օրենսգիրք</u>

101) Քաղաքացիական իրավունքի հասկացությունը և խնդիրները.

102) Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը.

103) Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը.

104) Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները.

105) Իրավաբանական անձանց տեսակները.

106) Պետության, համայնքների և մարզերի իրավունակությունն ու քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության ձևերը.

107) Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության.

108) Իրերի հասկացությունը, դասակարգումը և դրա իրավական նշանակությունը.

109) Դրամական միջոցները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ.

110) Արժեթղթերի հասկացությունը, տեսակները ու դրանց ընդհանուր բնութագիրը.

111) Առևտրային գաղտնիքի իրավական պահպանությունը.

112) Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը.

113) Սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը.

114) Պտուղների, եկամուտների և տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը: Պայմանագրով գույք ձեռք բերելը որպես սեփականության իրավունքի առաջացման հիմք.

115) Ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը.

116) Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքով, սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ.

117) Քաղաքացիների սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

118) Պետական սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

119) Իրավաբանական անձանց սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

120) Ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և առաջացման հիմքերը.

121) Ընդհանուր բաժնային սեփականության իրավունք.

122) Ընդհանուր համատեղ սեփականության իրավունք.

123) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները.

124) Ապօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը.

125) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը.

126) Գործարքի վավերության պայմանները.

127) Գործարքի անվավերության հասկացությունը: Անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները.

128) Հայցային վաղեմություն.

129) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը.

130) Պայմանագիրը փոփոխելը և լուծելը.

131) Պարտավորությունների կատարման հասկացությունը, կատարումն ապահովելու միջոցները:

132) Պարտավորությունների դադարումը.

133) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը.

134) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը.

135) Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության հասկացությունը և տեսակները.

136) Ժառանգությունն ըստ օրենքի և ըստ կտակի.

<u>Քաղաքացիական դատավարության օրենսգիրք</u>

137) Քաղաքացիական դատավարության հասկացությունը և խնդիրները.

138) Քաղաքացիական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը.

139) Քաղաքացիական դատավարության սկզբունքների հասկացությունը, տեսակները և նշանակությունը.

140) Կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները քաղաքացիական դատավարությունում.

141) Երրորդ անձանց հասկացությունը: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք.

142) Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության հիմքերը.

143) Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում.

144) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը.

145) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը.

146) Հայցի ապահովումը, նախնական ապահովումը և հակընդդեմ ապահովումը.

147) Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում.

148) Ապացույցների ապահովումը քաղաքացիական դատավարությունում.

149) Ապացույցների հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում.

150) Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում.

151) Ապացույցներ պահանջելու դատավարական կարգը քաղաքացիական դատավարությունում.

152) Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը քաղաքացիական դատավարությունում.

153) Ապացույցների հետազոտումը և գնահատումը քաղաքացիական դատավարությունում.

154) Նախադատելի փաստերը քաղաքացիական դատավարությունում.

155) Իրեղեն ապացույցները քաղաքացիական դատավարությունում.

156) Դատական փորձաքննության հասկացությունը, տեսակները և նշանակման կարգը քաղաքացիական դատավարությունում:

157) Գործի քննության կարգն առաջին ատյանի դատարանում քաղաքացիական դատավարության շրջանակներում.

158) Օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների տրամադրման վարույթը.

159) Դատական սանկցիաները քաղաքացիական դատավարությունում.

160) Գործի քննության հետաձգումը քաղաքացիական դատավարությունում.

161) Գործի վարույթի կասեցումը քաղաքացիական դատավարությունում.

162) Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթը քաղաքացիական դատավարությունում.

163) Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում.

164) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը.

165) Վերաքննիչ բողոք բերելու կարգը քաղաքացիական դատավարությունում.

166) Վճռաբեկ վարույթը, վճռաբեկ բողոքարկման իրավունքը.

167) Վճռաբեկ բողոք բերելու կարգը քաղաքացիական դատավարությունում.

168) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը քաղաքացիական դատավարությունում.

169) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով քաղաքացիական դատավարությունում.

170) Օտարերկրյա դատարանների և արբիտրաժների վճիռների ճանաչումը և կատարումը քաղաքացիական դատավարությունում.

Պետական շահերի պաշտպանություն

171) Քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի կարգավիճակը և մասնակցության հիմքերը.

172) Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով կամ հայց հարուցելիս դատախազի իրավունքները.

173) Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերը և հայցի տեսակները.

174) Կատարողական վարույթի հարուցման հիմքերը և կարգը.

175) Կատարողական վարույթի հարուցման ժամկետները.

176) Հարկադիր կատարողի որոշումները և դրանց բողոքարկումը.

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենք

177) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

178) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը.

179) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության սահմաններն ու իրականացման ժամկետները.

180) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության գաղտնիությունը և ուսումնասիրության ընթացքում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հավաքումը.

181) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության ընթացքում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հավաքման նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը.

182) Քրեական վարույթին զուգահեռ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն իրականացնելու առանձնահատկությունները.

183) Իրավասու մարմնի լիազորություններն ուսումնասիրություն իրականացնելիս և ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումը.

184) Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների ապահովումը.

185) Շահագրգիռ անձանց ծանուցումը.

186) Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումը և եզրակացության կազմումը.

187) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը.

188) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննությունը դատարանում.

189) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ապացուցման առանձնահատկությունները.

190) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը գույքը ձեռք բերողից.

191) Գույքը բարեխիղճ ձեռք բերողը և նրա գույքի բռնագանձման անթույլատրելիության վերաբերյալ կարգավորումները.

192) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ավարտումը հաշտության համաձայնությամբ, հաշտության համաձայնության պայմանների խախտմամբ պետությանը պատճառված վնասը և դրա հատուցումը.

193) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի կայացումը.

194) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը.

195) Պետության տիրապետությանը հանձնված գույքի կառավարումը և օտարումը.

196) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով միջազգային համագործակցությունը.

204) Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և միջազգային հիմնական իրավական ակտերը.